



ԱԳՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

AGRISCIENCE AND TECHNOLOGY

АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/hy/teghkagir

ՀՏԴ 338.43:663

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՑԱՐՁԱԿ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԿԼԱՏԻՖԻԿԱՆ ԽՄԻՋՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կ.Յ. Ավետիսյան, Ա.Ս. Տոնիկյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

avetisyanarine.h@mail.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

արտադրական ընկերություն,
ֆինանսական կայունություն,
բացարձակ ցուցանիշներ,
պաշարներ,
սեփական ընթացիկ ակտիվներ

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում դիտարկվում են գյուղատնտեսական հումք վերամշակող արտադրական ընկերության ֆինանսական կայունության գնահատման բացարձակ ցուցանիշների հաշվարկի մեթոդաբանության գործնական կիրառման հնարավորություններն ըստ «Պռոշյանի կոնյակի գործարան» ԲԲԸ և «Վեդի-Վկո» ՓԲԸ տվյալների: Ելակետային տվյալների վերլուծության հիման վրա գնահատվում է ռեսուրսներով և ծախսերի ձևավորման աղբյուրներով ապահովվածության աստիճանը:

Նախաբան

Շուկայական տնտեսավարման արդի պայմաններում գործող արտադրական ընկերությունների համար կարևոր նշանակություն ունեն ֆինանսական վիճակի վերլուծությունն ու գնահատումը:

Ֆինանսական վերլուծության տվյալները թույլ են տալիս ի հայտ բերել առկա խնդիրները, բացահայտել ընկերության զարգացման միտումները, գնահատել տնտեսական միջոցներն ու ռեսուրսները, որոնք հետագայում կարող են օգտագործվել կազմակերպության ֆինանսական ներուժը գնահատելու, ֆինանսական ապագան կանխատեսելու, ինչպես նաև ընթացիկ և հեռանկարային նպատակները սահմանելու համար:

Արտադրական ընկերությունների ֆինանսական վիճակի վերլուծության ընթացքում, բացի շահութաբերության, գործարար ակտիվության, իրացվելիության և այլ ցուցանիշների համակարգերի դիտարկումից, կարևոր նշանակություն ունի ֆինանսական կայունության գնահատումը:

Նյութը և մեթոդները

Ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշների վերաբերյալ գործում են որոշակի նորմատիվներ, որոնք բնութագրում են դրանց արժեքները: Սակայն որոշ ցուցանիշներ հնարավոր չէ նորմավորել: Ֆինանսական վիճակի վերլուծության ժամանակ անհրաժեշտություն է առաջանում դրանց շարքից առանձնացնել առավել հիմնականներն ու կարևորները, հաշվարկել փաստացի արժեքներն ու վերջիններիս միջև գոյություն ունեցող կոռելյացիոն կապերը: Ցուցանիշների շարժի ուսումնասիրության ժամանակ շատ կարևոր է դիտարկել փոփոխությունների վերլուծությունը, ինչը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ բնութագրել ուսումնասիրվող կազմակերպության ֆինանսական վիճակը:

Հայտնի է, որ ազդող գործոններով պայմանավորված՝ ֆինանսական կայունությունը լինում է ներքին և արտաքին (Ա.Յ. Բալայան, 2008):

Արտադրական կազմակերպության ֆինանսական ռիսկերի զսպման մարտավարության տեսանկյունից

առաջնային կարևորություն ունի ներքին ֆինանսական կայունության ապահովումը:

Ներքին ֆինանսական կայունության վերլուծության ժամանակ իրականացվում է պաշարների և ծախսերի փոփոխության պատճառների, ընթացիկ ակտիվների շրջանառելիության և սեփական շրջանառու կապիտալի ավելացման, ինչպես նաև միջոցների շրջանառելիության արագացման ուղիների համապարփակ ուսումնասիրություն: Նման վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է որոշել, թե կազմակերպության ֆինանսական դրությունը որ տարատեսակին է դասվում:

Արդյունքները և վերլուծությունը

Համեմատական գնահատման միջոցով հաջորդիվ ներկայացվում է միևնույն արտադրատնտեսական ճյուղի երկու ընկերությունների գործունեության ֆինանսական դրությունը:

Աղյուսակներ 1-ում («Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, 2015-2017 թթ.) և 2-ում («Վեդի-Ալկո» ՓԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, 2015-2017 թթ.), ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տվյալների, ամփոփված են «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ և «Վեդի-Ալկո» ՓԲԸ ֆինանսական կայունության գնահատման բացարձակ ցուցանիշները:

Դրանք բնութագրում են նշված ընկերությունների տնտեսական գործունեությունն ըստ պաշարների և կատարվող ծախսումների կազմավորման աղբյուրներով ապահովվածության աստիճանի (2015-2017 թթ.):

Ըստ հաշվարկային տվյալների՝ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ զուտ ընթացիկ ակտիվների (ՍԸԱ) գումարի չափն ուսումնասիրվող երեք տարիներին նվազել է՝ 2015 թ. համեմատությամբ 2016-ին 742,394 հազ. դրամով կամ 7%-ով, իսկ 2016 թ. համեմատությամբ 2017-ին՝ 989,054 հազ. դրամով կամ 11 %-ով:

Նույն ցուցանիշը «Վեդի-Ալկո» ՓԲԸ-ում ուսումնասիրվող տարիներին աճել է համապատասխանաբար 295,937 հազ. դրամով կամ 11 %-ով և 108,182 հազ. դրամով կամ 4 %-ով:

Նշված ցուցանիշի աճը դիմամիկայում գնահատվում է դրական. նշանակում է՝ «Վեդի-Ալկո» ՓԲԸ գործունեության արդյունավետ զարգացումը նպաստել է կրեդիտորական պարտքերի նվազմանը, ինչը չի դիտարկվում «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ պարագայում: Վերջինիս սեփական ընթացիկ ակտիվների նվազումը հանգեցրել է ընթացիկ պարտավորությունների աճի:

«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ում պաշարների և ծախսումների կազմավորման երկրորդ աղբյուրը (ՊԿԱ2) 2015 թ. համեմատությամբ 2016-ին նվազել է 889,451 հազ. դրամով կամ 7 %-ով, 2016 թ. համեմատությամբ 2017-ին՝ 416,365 հազ. դրամով կամ 4 %-ով:

Աղյուսակ 1. «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ ֆինանսական կայունության գնահատման բացարձակ ցուցանիշները

Ցուցանիշներ	Գումարը, հազ. դրամ			Շեղումը (+, -)			
				2016 թ-ին		2017 թ-ին	
				2015 թ. համեմատությամբ		2016 թ. համեմատությամբ	
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	բացարձակ, հազ. դրամ	հարաբերական, %	բացարձակ, հազ. դրամ	հարաբերական, %
Ելակետային տվյալներ							
Ոչ ընթացիկ ակտիվներ (ՈԸԱ)	2,022,550	1,732,683	1,823,722	(289,867)	(14)	91,039	5
Սեփական կապիտալ (ՍԿ)	9,896,660	9,011,456	7,540,752	(885,204)	(9)	(1,470,704)	(16)
Ոչ ընթացիկ պարտավորություններ (ՈԸՊ)	2,051,660	1,904,603	2,477,292	(147,057)	(7)	572,689	30
Ընթացիկ պարտավորություններ (ԸՊ)	4,759,228	6,364,135	10,243,238	1,604,907	34	3,879,103	61
Հաշվարկային տվյալներ							
ՊԿԱ1=ՍԿ+ՈԸՊ-ՈԸԱ=ՍԸԱ (սեփական ընթացիկ ակտիվներ)	9,925,770	9,183,376	8,194,322	(742,394)	(7)	(989,054)	(11)
ՊԿԱ2=ՍԸԱ+ՈԸՊ	11,977,430	11,087,979	10,671,614	(889,451)	(7)	(416,365)	(4)
ՊԿԱ3=ՊԿԱ2+ԸՊ	16,736,658	17,452,114	20,914,852	715,456	4	3,462,738	20

Աղյուսակ 2. «Վեդի-Ալկո» ՓԲԸ ֆինանսական կայունության գնահատման բացարձակ ցուցանիշները

Ցուցանիշներ	Գումարը, հազ. դրամ			Շեղումը (+, -)			
				2016 թ-ին 2015 թ. համեմատությամբ		2017 թ-ին 2016 թ. համեմատությամբ	
	2015 թ.	2016 թ.	2017 թ.	բացարձակ, հազ. դրամ	հարաբերական, %	բացարձակ, հազ. դրամ	հարաբերական, %
Ելակետային տվյալներ							
Ոչ ընթացիկ ակտիվներ (ՈԸԱ)	465,779	410,932	869,878	(54,847)	(12)	458,946	112
Սեփական կապիտալ (ՍԿ)	1,452,128	1,566,398	2,225,804	114,270	8	659,406	42
Ոչ ընթացիկ պարտավորություններ (ՈԸՊ)	1,706,702	1,833,522	1,741,244	126,820	7	(92,278)	(5)
Ընթացիկ պարտավորություններ (ԸՊ)	1,115,287	779,372	376,610	(335,915)	(30)	(402,762)	(52)
Հաշվարկային տվյալներ							
ՊԿԱ1=ՍԿ+ՈԸՊ-ՈԸԱ=ՍԸԱ (սեփական ընթացիկ ակտիվներ)	2,693,051	2,988,988	3,097,170	295,937	11	108,182	4
ՊԿԱ2=ՍԸԱ+ՈԸՊ	4,399,753	4,822,510	4,838,414	422,757	10	15,904	0
ՊԿԱ3=ՊԿԱ2+ԸՊ	5,515,040	5,601,882	5,215,024	86,842	2	(386,858)	(7)

Իսկ «Վեդի-Ալկո» ՓԲԸ-ում այդ աղբյուրն աճել է համապատասխանաբար 422,757 հազ. դրամով կամ 10 %-ով և 15,904 հազ. դրամով կամ 0,3 %-ով:

Պաշարների և ծախսումների երրորդ աղբյուրի ձևավորմանը մասնակցում են նաև ընթացիկ պարտավորությունները. ուսումնասիրվող տարիներին «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ում ընթացիկ պարտավորությունների աճի առումով գրանցվել է դրական դինամիկա, «Վեդի-Ալկո» ՓԲԸ-ում 2015 թ. համեմատությամբ 2016-ին աճը կազմել է 86,842 հազ. դրամ կամ 2 %, իսկ 2016 թ. համեմատությամբ 2017-ին ընթացիկ պարտավորությունները նվազել են 386,858 հազ. դրամով կամ 7 %-ով:

Անհրաժեշտ է նշել, որ պաշարների և ծախսումների կազմավորման աղբյուրների վերաբերյալ ներկայաց-

ված ցուցանիշներից յուրաքանչյուրին համապատասխանում է պաշարներով ապահովվածության որոշակի մակարդակ, որը որոշելու համար ուսումնասիրվող ընկերությունների օրինակով կատարվել են հաշվարկներ, որոնց ելակետային տվյալները ներկայացված են աղյուսակներ 3-ում և 4-ում:

Ըստ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ տվյալների ուսումնասիրության՝ երեք տարիներին էլ ընկերությունում ավելի շատ են պաշարները, քան դրանց և ծախսումների կազմավորման աղբյուրները, ինչը նշանակում է, որ դրանք գտնվում են պահեստում, այլ ոչ թե շրջանառության մեջ: Այս երևույթը հանգեցրել է դրամական միջոցների պակասի, ինչի հետևանքով ավելացել են կրեդիտորական պարտքերն ու այլ ընթացիկ պարտավորությունները:

Աղյուսակ 3. «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ պաշարներով ապահովվածության մակարդակը 2015-2017 թթ.*

Ցուցանիշներ	2015 թ.	2016 թ.	2017 թ.	Հարաբերական շեղումը, %	
				2016 թ-ին 2015 թ. համեմատությամբ	2017 թ-ին 2016 թ. համեմատությամբ
Պաշարներ	9,228,926	9,931,056	11,433,727	7.6	15.1
± Δ (ՊԿԱ)1	696,844	(747,680)	(3,239,405)	(207.3)	333.3
± Δ (ՊԿԱ)2	2,748,504	1,156,923	(762,113)	(57.9)	(165.9)
± Δ (ՊԿԱ)3	7,507,732	7,521,058	9,481,125	0.2	26.1

* «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, 2015-2017 թթ.

Աղյուսակ 4. «Վեդի-Ալկո» ՓԲԸ պաշարներով ապահովվածության մակարդակը 2015-2017 թթ.*

Ցուցանիշներ	2015 թ.	2016 թ.	2017 թ.	Հարաբերական շեղումը, %	
				2016 թ-ին 2015 թ. համեմատությամբ	2017 թ-ին 2016 թ. համեմատությամբ
Պաշարներ	2,856,032	2,736,272	2,116,718	(4.2)	(22.6)
± Δ (ՊԿԱ)1	(162,981)	252,716	980,452	(255.1)	288.0
± Δ (ՊԿԱ)2	1,543,721	2,086,238	2,721,696	35.1	30.5
± Δ (ՊԿԱ)3	2,659,008	2,865,610	3,098,306	7.8	8.1

*«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, 2015-2017 թթ.

«Վեդի-Ալկո» ՓԲԸ-ում վերջին երկու տարիներին գրանցվել է պաշարների կազմավորման համար նախատեսված ընդհանուր աղբյուրի՝ (ՊԿԱ)3-ի ավելացում, ինչը վկայում է ֆինանսական բացարձակ կայունության մասին:

Եզրակացություն

Այսպիսով, ըստ երկու ընկերությունների հաշվարկային տվյալների համեմատական վերլուծության, «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ ֆինանսական կայունությունը գնալով վատթարացել է, իսկ «Վեդի-Ալկո» ՓԲԸ-ում հաստատվել է ֆինանսական կայունություն:

Կատարված վերլուծությունները թույլ են տալիս ուսումնասիրվող ընկերությունների ֆինանսական կայունության պահպանման և ամրապնդման համար կատարել հետևյալ առաջարկությունները.

- պաշարները պահեստում չսառնեցնելու նպատակով վերանայել գնային քաղաքականությունը՝ փորձելով վերադիրքավորվել մրցակցային շուկայում,

- գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների արմատավորման նպատակով իրականացնել հումքի մթերման կանխատեսվող ծավալների, անհրաժեշտ շրջանառումիջոցների պահանջարկի պարբերական մոնիտորինգ,

- ձեռնարկել դեբիտորական պարտքերի կառավարմանն ուղղված կանոնակարգված և հետևողական միջոցառումներ:

Գրականություն

1. Բայադյան Ա.Յ. Ֆինանսական վերլուծություն: Ուսումնական ձեռնարկ. - Եր.: Լիմուշ, 2008. - 300 էջ (էջ 155):
2. «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, 2015-2017 թթ.:
3. «Վեդի-Ալկո» ՓԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվություններ, 2015-2017 թթ.:

АННОТАЦИЯ

Анализ абсолютных показателей оценки финансовой устойчивости в компаниях, производящих алкогольные напитки

В статье рассматриваются возможности практического применения методики расчета абсолютных показателей оценки финансовой устойчивости производственной компании (по данным ООО “Прошянский коньячный завод” и ЗАО “Веди-Алко”). На основании анализа исходных данных, оценивается степень обеспеченности ресурсами и источниками формирования расходов.

ABSTRACT

Analysis of Absolute Indicators for Assessing the Financial Sustainability in the Companies of Alcoholic Beverage Production

The article considers the practical application of the method of calculating absolute indicators for assessing the financial sustainability of a production company based on the data of “Proshyan Brandy Factory” LLC and “Vedi-Alco” CJSC. Based on the analysis, the provision rate with resources and cost formation sources have been estimated.

Ընդունվել է՝ 11.02.2019 թ.
Գրախոսվել է՝ 01.03.2019 թ.